ԻՆՏԵՐՆԵՏԻ ԼՐԱՀՈՍԻՑ*
ՀԱՐԿԱՎՈՐ Է ՀԱՐԳԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՇՏԸ

Ստամբուլ. Մարդու Իրավունքների Միության
Ստամբուլի մասնաճյուղ
27.04.2005

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դեռևս 90 տարի առաջ Օսմանյան կայսրության վերջին շրջանում իշխանական Իթթիհաթ Թերաքքի կուսակցությունը Ստամբուլում սկսեց լայնածավալ ձերբակալություններ: Այսօր ձերբակալվողներին ներկայացնում են իբրև «հայ կոմիտեականներ»: Մինչդեռ այդ մարդկանցից շատերն այն ժամանակվա հայ հանրության ընտիր մտավորականներն էին՝ պատգամավորներ, գրողներ, բանաստեղծներ, երաժիշտներ, արվեստագետներ, բժիշկներ, փաստաբաններ: Համարյա ոչ մեկը կենդանի չվերադարձավ: Սրան հաջորդեց զանգվածային աքսորները: Ապրիլի 24-ի ձերբակալությունները դարձան 1915-1916թթ. ընթացող էթնիկական մաքրազտման խորհրդանիշ: Արդյունքում՝ 20-րդ դարի սկզբում Անատոլիայում ապրող յուրաքանչյուր հինգերորդ անձ, այսինքն բնակչության մոտ 20 տոկոսը ոչ մուսուլմաններ էին, այս համեմատությունն այսօր իջել է 0.2 %-ի:

90 տարի անց՝ այսօր, ցեղասպանության ճանաչման պահանջների դեմ ընթացող աղավաղման արշավը չի կարողանում քողարկել այս պարզ իրականությունը: Մերկ իրականությունն այն է, որ մի ժամանակ Անատոլիայի քաղաքակրթության հիմնարարներից [մեկը հանդիսացող] հայերը, այսօր 70 միլիոնանոց բնակչության մեջ, մեծամասամբ Ստամբուլում ապրող 60 000-անոց մի հանրություն, վերափոխվեց, ու իրենց հարուստ պատմության հետքերն անգամ ջնջվեցին:

90 տարի է Թուրքիան չկարողացավ իր պատմության հետ հաշտվել: Ավելին՝ առերեսվելու փոխարեն այսօր տարբեր ձևերով և չափաբաժիններով հաղորդագրություններ է ուղարկում. «նրանք արժանի էին», «այսօր նորից կանենք»: Կիրառվող հարձակողական արշավը հրահրում է հայերի հանդեպ

* Տեղեկատվությունը վերցված է ինտերնետի թուրքական կայքերից:

թշնամություն և ատելություն, նրանց անձնական իրավունքների և արժանապատվության ոտնահարում, նրանց ձեռքից խլում է իրենց երկրում անվտանգ ապրելու իրավունքը:

Այն աստիճանի է հասել, որ Թուրքիայի Հայոց պարտրիարքարանն այսօր ստիպված է եղել պատրիարքարանի շենքի, դպրոցների, եկեղեցիների ու գերեզմանատների անվտանգության համար Ստամբուլի կուսակալությունից ապահովություն պահանջել:

Թուրքիայի պատմությունը քննարկելը և բանավիճելն արգելող քաղաքականությունը միաժամանակ ամբողջ հանրության հանդեպ իրավունքի խախտում է: Դա իրազեկվելու, իր պատմությունը սովորելու, ազատորեն հետազոտելու, բանավիճելու և իր միտքը արտահայտելու իրավունքի անտեսումն է: Ինչպես հանրապետության պատմության մեջ առկա արյունալի օրինակները, [այսօր ևս] պաշտոնական տեսակետի կամավոր պաշտպանները և իրենց ակտիվացրած մութ ուժերը կարողանում են իրականացնել պետական քաղաքականությունը և 90 տարվա վաղեմության դեպքերի հետ կապված տարբեր տեսակետներ արտահայտողների դեմ հայտարարում են բնաջնջման արշավ: Իրազեկվելու ազատության բացակայության պայմաններում, այս երկրում պետական քարոզչության սխալները ներկայացվում են իբրև ճշմարիտ՝ աղավաղելով պատմությունը:

Այդպես օրինակ՝ սկսած նախկին դեսպաններից, համալսարանների դասախոսներից մինչև պետական պաշտոնական ինտերնետային էջերը 1915թ. հայտարարված Գաղթի օրենքը մեկնաբանում են իբր դա ուղղված էր միայն ռուսների հետ համագործակցող հայերի դեմ: Մինչդեռ այս ասողները և գրողները գիտեն ինչպես այն, որ օսմանյան փաստաթղթերում տեղ է գտել Գաղթի հրահանգը, այնպես էլ այն, որ այդ հրահանգը գործադրվել է Անատոլիայի բոլոր վայրերում, բացի Ստամբուլից և Իզմիրից: Չորլուն, Իզմիթը, Բանդըրման, Աղապազարը, Էսքիշեհիրը, Բիլեջիկը, Բուռսան, Քյութահյան, Քոնյան, Անկարան, Կասթամոնուն, Չորումը, Չանքըրը, Ամասյան, Քըրշեհիրը, Կեսարիան այն քաղաքների մի մասն են միայն, որոնցից հարյուր հազարավոր մարդիկ դեպի մահ են ճանապարհորդվել: Սա և նման մի շարք իրողություններ, Թուրքիայում մարդկանց անիրազեկ թողնելով և իրազեկներին սպառնալով, առանց ամաչելու աղավաղվում են:

Պատմության աղվաղումը երաշխավորելու համար, ցեղասպանություն բառի կիրառման արգելքը օրենքի ուժ է ստացել: Բարեփոխումներ խոստացող «Արդարություն և բարգավաճում» կուսակցության կառավարությունը խորհրդարանում հաստատել է նոր Քրեական օրենսգիրքը, որի թիվ 305 հոդվածով «հիմնական ազգային օգուտ»-ին վիրավորանք հասցնելու որպես կոնկրետ օրինակ ցույց է տրվել՝ Հայոց ցեղասպանության կատարված լինելու մասին արտահայտությունն և ընդգրկվել է նմանատիպ հանցանքների շարքում:

Չափանիշերից շեղումը պարզ երևում է արտասահմանին ուղղված հաղորդագրություններում: Կարծես թե Թուրքիան չէ երկրի ներսում հարցի մասին բանավիճելն արգելողը, պաշտոնական ու ոչ պաշտոնական օղակներով ճնշում բանեցնողը, սպառնալիքների արշավներ կիրառողը:

Արտասահմանին հրավերքներ են ուղարկվում. «Եկեք հանձնախմբեր հիմնենք, բանավիճենք, մեր արխիվները բաց են» ձևով, բայց մյուս կողմից՝ հանրության պաշտոնական տեսակետի խոսնակների միջոցով հայտնում է ազատ հետազոտություն և գիտական աշխատանքների արգելման մասին: Սպառնում են գիտության մարդկանց, պատմաբաններին պաշտոններ են խոստանում պետական թեզիսները ակտիվորեն պաշտպանելու համար, անգամ պաշտոնական տեսակետի հանդեպ անտարբերները հետապնդվում են՝ չեզոք մնալու պատճառով:

Մարդու իրավունքի պաշտպանները պահանջում են ետ կանգնել այս ֆաշիստական արշավից, վերջ տալ ցեղասպանության բառի շուրջ հակադեմոկրատական օրենքներով սպառնալիքին և սպառնալիքի միջոցով արգելքներին, վերացնել թուրք հանրությանն իր պատմության հետ առերեսվելն արգելափակող՝ հայկական ցեղասպանությանն առնչվող՝ Քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածը:

1915թ. պատահարներն այնքան ծանր են, որ անկախ միջազգային իրավունքի՝ ցեղասպանության սահմանմանը համընկելու կամ չհամընկելու վիճաբանություններից, դրանք հաշվարկների և սակարկությունների առարկա չեն:

Իբրև Մարդու իրավունքների պաշտպաններ՝ 1915թ. ապրիլի 24-ի դեպքերի 90-ամյակին մենք ի սրտե կիսում ենք, թե՛ Թուրքիայի հայ քաղաքացիների և թե՛ իրենց երկրից վտարված նրանց ամենամտերիմների՝ կոտորածին ականատես հայերի, աշխարհի չորս կողմերն ի սփյուռ նրանց զավակների, թոռների վիշտը: Նրանց ասում ենք. «Ձեր վիշտը մերն է, որպեսզի դա երբևէ չկրկնվի, պատահածը երբևէ չենք մոռանալու»:

Մենք դատապարտում ենք կիրառվող հարձակողական արշավը և կոչ ենք անում պետական տեսակետը պաշտպանողներին, մամուլին, գիտության մարդկանց, բոլորին՝ հարգանք ցույց տալ հայ ժողովրդի վշտի հանդեպ:

Թարգմանությունը՝ ԿԱՅԾԱԿ ՄԱՐՄԱՐՅԱՆԻ